ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

N 02/7123-2024
"02"ապրիլ 2024թ.

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
☏ (374-10) 65-05-53
Էլ. փոստ՝ info@hlib.am

«ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ԿԱՐԵՆ ՋԱԴՈՅԱՆԻՆ
ՀՀ, ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 7, ԳՐԱՍԵՆՅԱԿ 2
Էլ. հասցե՝ info@armla.am, saribekyanartak@gmail.com

Հարգելի՛ պարոն Զադոյան,

Ի պատասխան Ձեր՝ 2024 թվականի փետրվարի 28-ի թիվ 01/76 գրության, տեղեկացնում եմ, որ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից Ձեր բարձրացրած հարցերի պարզաբանման նպատակով 2024 թվականի մարտի 04-ին հարուցվել է թիվ 040324-276 վարչական վարույթը՝ «Հեփի Սմայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում (այսուհետ՝ Ընկերություն) «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի սեպտեմբերի 17-ի «Ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից պացիենտների հաշվառման կարգը, պացիենտների հաշվառման մատյանների, մեծահասակի ստոմատոլոգիական քարտի, երեխայի ստոմատոլոգիական քարտի, պացիենտներին տրամադրվող այցելության քարտի ձևերը և մեծահասակի ստոմատոլոգիական քարտի և երեխայի ստոմատոլոգիական քարտի վարման և դրանց լրացման ուղեցույցները հաստատելու

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

մասին» N 18-Ն հրամանի հավելված N 1-ի 3-րդ, 5-րդ կետերի, հավելված N 2-ի, N 3-ի, N 4-ի, N 5-ի, N 8-ի, N 9-ի, N 10-ի, ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման, դեղերի մեծածախ իրացման, բժշկական արտադրատեսակների արտադրության, բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» N 867 որոշման հավելված N 16-ի 2-րդ կետի 2.2 ենթակետի 2.2.1 պարբերության պահանջների պահպանումը պարզելու նպատակով:

2024 թվականի մարտի 12-ից մինչև մարտի 14-ը ներառյալ իրականացված զննման արդյունքում պարզվել է, որ.

1. Ընկերությունում չի վարվում վճարովի ծառայությունների համար պացիենտների հաշվառման մատյան, որով խախտվել են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի սեպտեմբերի 17-ի «Ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից պացիենտների հաշվառման կարգը, պացիենտների հաշվառման մատյանների, մեծահասակի ստոմատոլոգիական քարտի, երեխայի ստոմատոլոգիական քարտի, պացիենտներին տրամադրվող այցելության քարտի ձևերը և մեծահասակի ստոմատոլոգիական քարտի և երեխայի ստոմատոլոգիական քարտի վարման և դրանց լրացման ուղեցույցները հաստատելու մասին» N 18-Ն հրամանի հավելված N 1-ի 3-րդ կետի, հավելված N 3-ի պահանջները:

2. Ընկերությունում չի վարվում օրենսդրությամբ սահմանված ձևի մեծահասակի ստոմատոլոգիական քարտ՝ խախտելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի սեպտեմբերի 17-ի

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

«Ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից պացիենտների հաշվառման կարգը, պացիենտների հաշվառման մատյանների, մեծահասակի ստոմատոլոգիական քարտի, երեխայի ստոմատոլոգիական քարտի, պացիենտներին տրամադրվող այցելության քարտի ձևերը և մեծահասակի ստոմատոլոգիական քարտի և երեխայի ստոմատոլոգիական քարտի վարման և դրանց լրացման ուղեցույցները հաստատելու մասին» N 18-Ն հրամանի հավելված N 4-ի պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից 2024 թվական մարտի 28-ին Ընկերությանը տրվել է Կարգադրագիր՝ բացահայտված խախտումները վերացնելու նպատակով, իսկ բժիշկ ստոմատոլոգ Հայկ Բախշյանը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 47.18-րդ հոդվածի 2-րդ մասով ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից eID ԹԱԳՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ

Կատարող՝ Նելլի Քրիստափորյան
բժշկական օգնության և սպասարկման
վերահսկողության վարչություն
Հեռ՝. 010 65-05-53

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արաբկիրի 26
Հեռ. (374-10) 65-05-53 էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107